ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան
(կնքման վայրը)

«11» դեկտեմբերի 2020թ.

«27» ապրիլի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման թիվ ԿՊ0105 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս աշխատակազմի ղեկավար Է.Աղաջանյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի** 6-րդ հավելվածին կից ցանկում («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ վարչապետի աշխատակազմի ստորաբաժանումներ) ավելացնել ստորև նշված բաժանորդական քարտը.

հ/հ	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	37622001	8266612	ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	Երևանի ԷՄԴ «Կենտրոն» տարածք

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2020 թվականի դեկտեմբերի 1-ից, **Կողմերի** միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Սույն համաձայնագիրը հանդիսանում է **Պայմանագրի** անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր **Կողմի** համար:

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 127

Լիազորված անձ՝

Դ. Ղազինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Սպառող՝
ՀՀ վարչապետի աշխատակազմ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Աշխատակազմի ղեկավար՝

Է. Աղաջանյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.